

N 40/01-637

« 15 » « ՕԿ » 2025թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ-ի ՏՆՕՐԵՆ,
Ա. Հ. ՍԵՂՈՅԱՆ

Առաջատար կազմակերպության

ԿԱՐԾԻՔ

**Հայկ Արթուրի Դիերյանի «Երևանի ստորգետնյա տարածքների զարգացման և օգտագործման
ճարտարապետական առանձնահատկությունները» թեմայով՝**

**ԺԸ. ՕՕ. Օ1 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

Թեմայի արդիականությունը

Քաղաքների արագ զարգացման և կառուցապատման խտության մեծացման պայմաններում ստորգետնյա տարածքների ռացիոնալ օգտագործումը դառնում է քաղաքային միջավայրի կայուն զարգացման առանցքային գործոն: Ժամանակակից քաղաքները բախվում են տարածքների պակասի խնդրին՝ անհրաժեշտ ենթակառուցվածքների, հանրային տարածքների և տրանսպորտային լուծումների տեղակայման համար: Այս խնդիրը հատկապես սուր է զգացվում քաղաքի պատմական և կենտրոնական հատվածներում, որտեղ հորիզոնական զարգացման հնարավորությունները գրեթե սպառված են:

Ժամանակակից քաղաքային միջավայրի զարգացման համատեքստում կարևոր դեր է խաղում ստորգետնյա տարածքների օգտագործումը: Պատմականորեն այս տարածքները ենթարկվել են բազմաթիվ ֆունկցիոնալ և համակարգային փոփոխությունների, որոնք արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական

առանձնահատկությունները: Ներկայիս իրողություններում ստորգետնյա տարածքը դիտվում է որպես արժեքավոր ռեսուրս, որը հնարավորություն է տալիս ընդլայնել քաղաքի ֆունկցիոնալ հնարավորությունները՝ առանց վնասելու նրա քաղաքաշինական կառուցվածքը:

Հետազոտությունը նվիրված է Երևան քաղաքում ստորգետնյա տարածքների օգտագործման վերլուծությանը՝ կայուն զարգացման ուղիներ բացահայտելու նպատակով:

Ատենախոսությունը, որը հայերեն շարադրված է համակարգչային տպագիր 124 էջի վրա, բաղկացած է ներածությունից, 3 գլխից, ընդհանուր եզրակացություններից և 103 անուն օգտագործված գրականության ցանկից: Այն ներառում է 33 էջ հավելվածներ:

Աշխատանքի առաջին գլխում ուսումնասիրվել են ստորգետնյա տարածքների օգտագործման միջազգային փորձը և կատարվել է պատմական զարգացման համառոտ վերլուծություն: Ընդհանրացվել են ստորգետնյա տարածքների օգտագործման դրդապատճառները, արդյունավետ զարգացման գործոնները, ծավալատարածական բնութագրերը և ֆունկցիոնալ դասակարգումները: Վերլուծվել են արտասահմանյան մի շարք օրինակներ՝ դիտարկվելով դրանց դերն ու առանձնահատկությունները քաղաքային միջավայրում: Դրանից հետո բացահայտվել են ստորգետնյա տարածքների նախագծման, օգտագործման և հեռանկարային զարգացման վրա ազդող որոշակի բնութագրեր:

Երկրորդ գլխում վերլուծվել են Երևան քաղաքի կենտրոնում առկա ստորգետնյա տարածքներն ըստ օգտագործման առանձնահատկությունների և ֆունկցիոնալ բնութագրերի, որոնց արդյունքում բացահայտվել են մի շարք խնդիրներ: Հստակեցվել է Երևանի կենտրոնի ստորգետնյա տարածքների օգտագործման հեռանկարային զարգացման առաջնահերթությունը, որի արդյունքում անհրաժեշտ է եղել ուսումնասիրել նաև ստորգետնյա քաղաքաշինության զարգացմանը միտված առաջարկությունները և նախագծերը: Ուսումնասիրվել են 2007 թվականին մշակված Երևան քաղաքի «Կենտրոն» թաղային համայնքի տարածքի գոտիավորման նախագծում առկա ստորգետնյա քաղաքաշինության զարգացման առաջարկները, ինչպես նաև քննարկվել են մի շարք տեղայնացված առաջարկներ քաղաքի կենտրոնի տարբեր հատվածներում: Համեմատական վերլուծությամբ բացահայտվել է, որ խնդիրների առաջացումը և լուծումների ոչ հստակ լինելը ընդհանուր մոտեցումների և մշակված չափորոշիչների համակարգվածության բացակայության արդյունք է:

Երրորդ գլխում հիմնավորվել է ստորգետնյա տարածքների օգտագործման նկատմամբ որոշակի սահմանաչափեր և մոտեցումներ սահմանելու անհրաժեշտությունը: Համեմատելով արտերկրի ստորգետնյա տարածքների օգտագործման օրինակների առանձնահատկությունները և մոտեցումները Երևանի կենտրոնում առկա ստորգետնյա տարածքների վիճակի հետ՝ հստակեցվել է համակարգված լուծումների առաջնահերթությունը: Առաջարկվել է իրականացնել ստորգետնյա տարածքների համալիր օգտագործման գոտիավորման նախագիծ՝ սահմանելով հեռանկարային

զարգացման ուղղություններ, ծավալատարածական չափորոշիչները և ֆունկցիոնալ նշանակությունները: Առաջարկված գոտիավորման սխեմայում հստակեցվել և համակարգվել են Երևան քաղաքի կենտրոնում ստորգետնյա տարածքների հեռանկարային զարգացման ուղղությունները, ինչպես նաև առաջ են բերվել ֆունկցիոնալ գոտիների կազմակերպմանը սխեմատիկ կտրվածքներ հանրային տարածքների և ավտոճանապարհների ստորգետնյա տարածքների համալիր օգտագործման համար:

Հստակեցվել է քաղաքաշինական և տնտեսական ավելի խորը վերլուծությունների անհրաժեշտությունը, որի արդյունքում դիտարկվել են եռաչափ քաղաքաշինական վերլուծությունների առավելությունները ՀՀ-ում առկա երկչափ ուսումնասիրությունների նկատմամբ:

Մշակվել է Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ) գործիքակազմի վրա հիմնված մեթոդ, որի շնորհիվ կարելի է իրականացնել քաղաքաշինական եռաչափ ուսումնասիրություններ՝ բացահայտելով Երևան քաղաքում նախատեսվող ստորգետնյա տարածքների իրատեսական ծավալատարածական չափորոշիչները:

Ընդհանուր առմամբ, հետազոտման խնդիրներն են.

- Քաղաքային միջավայրում ստորգետնյա տարածքների օգտագործման առանձնահատկությունների ուսումնասիրությունը,

- Երևան քաղաքի կենտրոնում առկա ստորգետնյա տարածքների ներկա վիճակի վերլուծությունը և արդի խնդիրների բացահայտումը,

- Երևանի ստորգետնյա քաղաքաշինության հեռանկարային զարգացման ուղղությունների բացահայտումը,

- Երևանի ստորգետնյա տարածքների օգտագործման համակարգման և զարգացման մեթոդների բացահայտումը:

Աշխատանքի մեթոդաբանությունը հիմնված է տեղական և արտասահմանյան հրապարակումների, քարտեզագրական նյութերի և տեսական ուսումնասիրությունների ընդհանրացման, հետազոտությունների համեմատական վերլուծությունների գիտական մեթոդների վրա՝ ներառելով մի շարք համակարգչային ծրագրերի կիրառումը:

Աշխատանքի եզրակացություններում բացահայտվել են Երևան քաղաքի կենտրոնում առկա ստորգետնյա տարածքների օգտագործման մի շարք խնդիրներ, որոնց լուծման և կանխարգելման նպատակով առաջարկվել է Երևանի կենտրոնի ստորգետնյա տարածքների համալիր օգտագործման գոտիավորման սխեմա: Վերջինիս միջոցով բացահայտված հեռանկարային զարգացման առանցքային ուղղություններով ստորգետնյա տարածքների համալիր օգտագործման շնորհիվ կարելի է ստեղծել անընդհատ հետիոտնային փոխկապակցվածություն քաղաքային միջավայրի կարևոր հատվածների միջև, ինչպես նաև լուծել մի շարք քաղաքաշինական խնդիրներ:

Մշակվել է Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (USC) գործիքակազմի վրա հիմնված մեթոդ, որի շնորհիվ կարելի է իրականացնել քաղաքաշինական եռաչափ ուսումնասիրություններ՝ բացահայտելով Երևան քաղաքում նախատեսվող ստորգետնյա տարածքների իրատեսական ծավալատարածական չափորոշիչները:

Հեղինակի կողմից իրականացվել է մանրակրկիտ հետազոտական աշխատանք: Դիտարկված և վերլուծված օրինակները համապատասխանում էին թեմայի բովանդակությանը: Մշակված հեռանկարային զարգացման սխեման կարող է մեծ նշանակություն ունենալ քաղաքային միջավայրի հետագա զարգացման վրա՝ լուծելով քաղաքաշինական ներկայիս որոշ խնդիրներ:

Ատենախոսության վերաբերյալ կա հետևյալ դիտողությունը.

Աշխատանքում առկա են որոշ խմբագրական թերություններ: Գրաֆիկական նյութերը կարող էին մշակվել ավելի մեծ մանրամասնությամբ: Կարելի էր ավելի ընդլայնված կերպով դիտարկել Երևանի ստորգետնյա տարածքների առանձնահատկությունները՝ ըստ այն շերտերի, որոնք կարող են որոշիչ նշանակություն ունենալ հետագա իրացման աշխատանքների համար:

Նշված դիտողություններն էական չեն և չեն կարող ազդել հեղինակի կատարած հետազոտությունների և ստացված արդյունքների կարևորության վերաբերյալ կազմվող ընդհանուր բարձր գնահատականի վրա:


ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հ. Ա. Դիերյանի «Երևանի ստորգետնյա տարածքների զարգացման և օգտագործման ճարտարապետական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը ավարտուն աշխատանք է, ունի պատշաճ գիտական մակարդակ և լիովին բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման գործող կանոնակարգով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Հայկ Արթուրի Դիերյանը արժանի է ԺԸ. 00. 01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

«Երևաննախագիծ» ՓԲԸ ԳՀԲ-ի ՆԳՃ,
ճարտ. թեկնածու, պրոֆեսոր՝



Ա. ՍԵՂՈՅԱՆ

Չ. ՄԱՄՅԱՆ